Կ-1286-17.03.2026-ՏՀ-011

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տարածական տվյալների մասին» 2023 թվականի հունվարի 17-ի ՀՕ-21-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել նոր 9-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«9) ապահովում են կոորդինատային կապակացում (կոորդինատային համակարգում տեղորոշում) ունեցող գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու կամ գործունեություն իրականացնելու իրավունքը հաստատող վարչական եւ այլ ակտերի վերաբերյալ թեմատիկ տարածական տվյալների շերտերի՝ Կառավարության սահմանած ստանդարտացման ուղեցույցների հիման վրա ստեղծումը, վարումը, ազգային գեոպորտալ ինտեգրումը, թարմացումը, ինչպես նաեւ նշված տարածական տվյալների մետատվյալների՝ ազգային ստանդարտի հիման վրա ստեղծումը, վարումը, ազգային գեոպորտալ ինտեգրումը եւ թարմացումը՝ այդ ակտերն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված եւ գործող սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված ակտերի վրա:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված, մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված եւ գործող ակտերի վերաբերյալ թեմատիկ տարածական տվյալների շերտը, ինչպես նաեւ մետատվյալները դրանք ընդունելու իրավասություն ունեցող պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ստեղծվում եւ ինտեգրվում են ազգային գեոպորտալին՝ Կադաստրի կոմիտեի մասնագիտական խորհրդատվական աջակցությամբ, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունում է սույն օրենքն ուժի մետ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

Կ-1286-17.03.2026-ՏՀ-011/1~~0~~

Լրամշակված ~~նախագիծ~~

Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տարածական տվյալների մասին» 2023 թվականի հունվարի 17-ի ՀՕ-21-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել նոր 9-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«9) ապահովում են կոորդինատային կապակցում (կոորդինատային համակարգում տեղորոշում) ունեցող գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու կամ գործունեություն իրականացնելու իրավունքը հաստատող վարչական եւ այլ ակտերի վերաբերյալ թեմատիկ տարածական տվյալների շերտերի՝ Կառավարության սահմանած ստանդարտացման ուղեցույցների հիման վրա ստեղծումը, վարումը, ազգային գեոպորտալ ինտեգրումը, թարմացումը, ինչպես նաեւ նշված տարածական տվյալների մետատվյալների՝ ազգային ստանդարտի հիման վրա ստեղծումը, վարումը, ազգային գեոպորտալ ինտեգրումը եւ թարմացումը՝ ~~վարչական~~ այդ ակտերն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված եւ գործող սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված ակտերի վրա:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված, մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված եւ գործող ակտերի վերաբերյալ թեմատիկ տարածական տվյալների շերտը, ինչպես նաեւ մետատվյալները դրանք ընդունելու իրավասություն ունեցող պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ստեղծվում եւ ինտեգրվում են ազգային գեոպորտալին՝ Կադաստրի կոմիտեի մասնագիտական խորհրդատվական աջակցությամբ, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունում է սույն օրենքն ուժի մետ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1286-17.03.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**1-ին հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Տարածական տվյալների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 9-րդ կետում կիրառվում են ինչպես «վարչական և այլ ակտեր», այնպես էլ «վարչական ակտերն» ձևակերպումները: Նշվածով պայմանավորված՝ իրավական անորոշություն չառաջացնելու, կարգավորման առարկայի շրջանակը հստակ սահմանելու և հետագա տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք «վարչական ակտերն» բառերը փոխարինել «այդ ակտերն» բառերով, քանի որ տվյալ ձևակերպումը կապահովի հղման հստակությունը՝ ընդգրկելով նույն կետում նախապես նշված «վարչական և այլ ակտերը»:	Ընդունվել է:	